



46 (230). ԼՈՒՄԱՆԻ ՏՂԵՆ ՈՒ ԳԵՂԱՑԻՆ

Լոխման հեքիմի տղեն ցորեն կը տաներ շաղաշ աղեր, ճամպին էջ կը քեպլի, բեռ գընկնա վրավեն. էդ վախտ գեղացի մե աշալս գիկա գընցնա:

— Ա՛խպեր, ա՛խպեր, արի՛ ընձի օղնե ղիդա բեռ բառնանք:  
— Վոազ իմ, չըմ կոնա գա,— կըսե գեղացին:  
— Հա՛րիՖ,— կըսե,— չէ՞ ես Լոխման հեքիմի տղեն իմ, հալ-բաթ օր մե՛ իմ հոր հավճա կէղնիս:

— Ես Լոխման հեքիմից ըսկի մունաթ չըմ քաջի, գնա ուրին ըսե՛ «Օրը մեկ, ամիսը մեկ, տարին մեկ»:

Լոխման հեքիմն չիմցավ, ուր տղին ըսեց.

— Որգի՛, էն մարդ, օր օրը մեկ հեղ հաց կուտե, ամիս մեկ հեղ շուր կը խմե, տարին մեկ հեղ ուր անկողին կէրթա, էլ ընձնե ի՞նչ մունաթ կէնե, ընձի յորի՞ն պտի հավճի:

